

Նոյն եկեղեցիները 614-1099

է. դարու սկիզբը տեղի ունեցաւ պարսիկներուն արշաւանքը Ս. Երկրին վրայ. վրէժխնդրութեան մը սարսափը քանդեց Ս. Քաղաքը իր բոլոր հաստատութիւններով: Զրթենեաց լերան երկու եկեղեցիներն ալ, քաղաքէն դուրս ըլլալով ալ աւելի քան դուժի ենթարկուեցան: Պարսիկները Զրթենեաց լերան վրայ հաւաքած էին բոլոր գերիները, որոնց մէջ կը գտնուէր Զաքարիա պատրիարքը, որ լերան բարձունքէն հեկեկանօք և սարսափով կը զիտէր ամբողջ քաղաքին հրկիղումը: Մաբայի վանքէն անանուն վանական մը վերջերս գտնուած արարբերէն իր մէկ գրքուածքովը, մանրամասն գրի առած է արշաւող բանակին սպաննուածներուն մէկ ցուցակը, նշանակելով նաև այն տեղիքը, ուր գտնուած են սպանեալներուն դիակները: Նոյն ցուցակին մէջ կը յիշուին նաև Զրթենեաց լերան վրայ սպաննուածներն ալ. անտարակոյս երկու եկեղեցիներն ալ ազատ չմնացին այդ անօրինակ քանդումներէն, որ յետոյ նորոգուեցան, նոր Զօրաբաբէլ՝ վանական Մոտեսատոսի ձեռքով եւ օժանդակութեամբ արեւելքի քրիստոնէից: Այս պարագան կը յիշատակէ Անտիօքոս վանական՝ Անկիւրիոյ Եւստազիոսի գրած իր նամակին մէջ (Migne, P. G. LXXXIX): Այս վերանորոգութենէ յետոյ, նոյն եկեղեցիները կը նկարագրուին հետեւեալ կերպով.

Աւակերսարանը

Սոփրոնիոս վանականը, է. դարուն պատրիարք Երուսաղէմի, իր անակրէոնեան (anacréontique) տաղերուն մէջ, խորհրդաւոր ուղեորութեամբ մը կը գրէ «Բյրի եկեղեցիէն եկայ Աւակերսարանը և կը գտնուէի այն տանիքին տակ, ուր Յիսուս նախակրթեց իր աշակերտները աստուածային իրաց, ցոյց տալով անոնց ծածկուած գաղտնիքները»: Կը թուի թէ ան Աւակերսարան մտած էր կողմնակի դռնէ մը, որ բացուած էր Բյրի եկեղեցոյն կողմը, հիւսիսային պատին վրայ. յետոյ կը յառաջանայ դէպի արևմուտք, դիտելու համար Երուսաղէմը, եկեղեցոյն գլխաւոր գաւիթէն. «յետոյ մեծ դռնէ մը յառաջանալով դէպի աստիճանները, կը տեսնէի գեղեցկութիւնները Ս. Քաղաքին՝ որ կը պարզուին արև-